

ք. Երևան

« 17 » « 09 » 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **19247500 (տասնինը միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝** ներառյալ 15-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 30-րդ, 35-րդ չափաբաժինների ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուը այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Ք. Երևան, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն

Հ/Հ 900011033447

ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ



ԿԱՏԱՐՈՂ

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ


ՀՀ ք. Երևան, Դավիթ Մալյան 43

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570058307060100

ՀՎՀՀ 00009253

Տնօրեն՝



Վ. Գասպարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Ա. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՆԱԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

Չափաբաժինները		Տեխնիկական բնութագիրը					Մատակարարման ժամկետը
Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Անվանումը	չափանիշները	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ		
1 22111110/90	Դասագրքեր-1	Գնման առարկա է հանդիսանում. «Մայրենի 4» /4-րդ դասարանի դասագիրք/, 2 մաս, և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը հեղ.՝ Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան Բովանդակային չափանիշներ Դասագրքերը նախատեսված են չորրորդ դասարանի առաջին և երկրորդ կիսամյակների համար: Գրքում ուսումնական նյութերը բաժանված են ըստ թեմատիկաների: Բուն ուս. նյութին առնչվող հարցերից ու առաջադրանքներից բացի յուր. նյութի վերջում արկա են բառերի, պատմության և գրույցների գանձատուփեր, պատմության և հեքիաթների գաղբյուր, Լեզվաբանի դասը, իմաստունի օրատեաորից, Իմաստունի և տատիկի խորհուրդները վերնագրերով հավելյալ նյութեր, ասացվածքներ հանելուկներ, բառախաղեր ու սուտանելուկներ, որոնք միտված են ավելի ընդլայնել աշակերտի իմացության ու տրամաբանության սահմանները: Դասագրքի վերջում արկա են քերականական ամփոփ տեղեկատուներ և ուղղագրական բառարան: Տեխնիկական չափանիշները Հափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 200 Կազմի թուղթը՝ ֆուտբոլոտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0	հատ	960	1800	1728000	Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը

			Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմաստիճան			
			Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 5» /5-րդ դասարանի դասագիրք/ և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը հեղ.՝ Դ.Գյուրջինյան և այլ Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է հինգերորդ դասարանի աշակերտների համար: Դասագիրքում նյութերը ամփոփված են ըստ բաժինների՝ յուրաքանչյուր ընթերցանության նյութ ուղեցվում է քերականական նյութով: Այս դասագրքի միջոցով աշակերտը ծանոթանում է գրական ժանրերին՝ հեքիաթներ, առակներ, երգ ու տաղ և նամակագրական ժանրերին: Յուր. դասի վերջում տրված են տեքստային, բառային առաջադրանքներ ու վարժություններ: Դասագրքի վերջում առկա են ուղղագրական և բացատրական բառարաններ: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 256 Կազմի թուղթը՝ ֆուտբոլ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմաստիճան			
2	22111110/91	Դասագրքեր-2	հատ	930	1800	1674000
						Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը
3	22111110/92	Դասագրքեր-3	հատ	1050	2500	2625000
						Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը

			Կազմի գույները՝ 4+0 Կազմարություն՝ թեկակր, լամինացիա ջերմաստիճան Գնման առարկա է հանդիսանում «Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն» դասագիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը հեղ.՝ Լ.Մոլդաղյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է անգլախոս արտասահմանյանների և սփյուռքայինների համար: Առաջին մասում ուսուցանվում է հայերենի այբուբենը և նվազագույն ամենից գործուն բառապաշարը: Երկրորդ մասը բաղկացած է տասը տեքստից: Գրավոր և բանավոր խոսքի նվազագույն հմտությունները յուրացնելուն զուգահեռ՝ սովորողները կարդում և թարգմանում են այդ տեքստերը, առաջարկված հարցերի օգնությամբ վերադարձնում դրանց բովանդակությունը: Երրորդ մասում ներկայացված են կաղապարային հարցեր և դրանց հնարավոր պատասխանները, թեմատիկ գործուն բառապաշար՝ հայկական միջավայրում ապրելու և հաղորդակցական գործառույթն ապահովելու համար: Չորրորդ մասը քերականության ուղեցույց է, որից սովորողները կարող են հետագայում ևս օգտվել: Գրքի II բաժինն ընդգրկում է 100 հարորդակցական վարժություն, որոնք առօրյա կենցաղային ամենից անհրաժեշտ բառապաշարն են ընդգրկում: Այս բաժինը ստեղծելիս՝ հեղինակը նպատակ է ունեցել նպաստել սովորողների բանավոր խոսքի զարգացմանը, ինքնուրույն գրույց կարելու հմտությանը: Գրքի III մասն ընդգրկում է Հայաստանի պատմությանը, քաղաքներին վերաբերող ուսումնական տեքստեր, որոնք ուսումնասիրելիս սովորողներն իրենց գիտելիքներն ավելի կխորացնեն: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 320 Կազմի թուղթը՝ ֆուտբոլային 250 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարություն՝ լամինացիա ջերմաստիճան				
4	22111110/93	Դասագրքեր-4	հատ	200	5000	1000000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
5	22111110/94	Դասագրքեր-5	հատ	100	2300	230000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

		հեղ. Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան և Ա.Աբրահամյան Բովանդակային չափանիշներ Նախատեսված է մանկապարտեզում և տանը աշխատելու համար: Դասագիրքը բաղկացած է 22 թեմատիկ մասերից, որոնցից յուրաքանչյուրում մայրենի լեզվին և մայթենատիկային վերաբերվող նյութեր են իրենց ամփոփումներով: Դասագիրքը հանդիսանում է գիրք-տետր, որը հնարավորություն է տալիս երեխային զարգացնելու ստեղծագործական ունակությունները(գծել, ներկել, նկարել, կտրատել): Ներառված են շուտամեղմներ և հանելուկներ: Նորայգրված երգերը նախատեսված են մանկապարտեզներում ինչպես Նորայգրված երգերը նախատեսված են մանկապարտեզներում ինչպես խմբային միջոցառումների, այնպես էլ անհատական հանձնարարությունների համար: Դասագիրքն ամբողջությամբ ապահովում է երեխաների ճանաչողական նախնական գիտելիքները (տարվա եղանակներ, կենդանիներ, բույսեր, գործիքներ, փոխադրամիջոցներ և այլն), տրամաբանության (համեմատություններ՝ մեծ-փոքր, կարճ-երկար, հաստ-բարակ և այլն) պատմողական ունակության զարգացումը: Գրքում ընդգրկված բանաստեղծությունները բացի ճանաչողական բնույթից ունեն նաև դաստիարակչական նպատակ: Արքյուդ դասագիրք-տետրը նմանատիպ շատ գրքերից առանձնանում է նրանով, որ թեմատիկ առումով ընդգրկում է և նպաստում է երեխաների բազմակողմանի զարգացմանը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20 x 26 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 160 Կազմի թուղթը՝ ֆուտբոլ 250 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ ջեղմաստիչ					
6	Ուսուցողական գրքեր-1	գլխման առարկա է հանդիսանում «Ալբրենսարան 1» ուսուցչի ձեռնարկ (ուսուցողական գիրք), հեղ.՝ Ա.Քյուրքչյան և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Ուղեցույցի հեղինակներն առաջարկում են գրաճանաչությունը երեք փուլով անցնելու եղանակը՝ ա) նախապատրաստական կամ նախալրբենական շրջան, բ) ալբրենական կամ գրուսուցման շրջան, գ) հետալրբենական շրջան:					հատ 80 1000 80000 Միջև ս.թ.սեպտեմբերի 30-ը

			Բուն գրուուցման շրջանը բաժանված է երեք փուլի՝ հնչյունների արտասանության ու տառերի գրության բարդությանը և խոսքի մեջ գործածվելու հաճախությանը համապատասխան: «Այբբենարան» ունի հավելված, որտեղ գետնելված են բանաստեղծություններ, պատմություններ, հեքիաթներ, երգեր և այլն: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 14.5 x 20 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1+1 Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ ֆուտբոլոտ 250 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ մետաղալար, լամինացիա				
7	22111100/12	Ուսուցողական գրքեր -2	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 2» ուսուցչի ձեռնարկ (ուսուցողական գիրք), հեղ.՝ Ա.Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Ձեռնարկում առանձին բաժիններով նշված են առարկայի ծրագրային պահանջները և դրանց իրագործման ուղիները, դասագրքերի կառուցվածքը, լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը, ընթերցանության նյութերի մշակման մասին խորհուրդներ և դասական դրան արդիական մեթոդների կիրառման մասին տեղեկություններ: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 14.5 x 20 Տեքստի թուղթը՝ 70 գր ,օֆսետ Տեքստի գույները՝ 1+1 Էջերի քանակը՝ 84 Կազմի թուղթը՝ ֆուտբոլոտ 250 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ ֆոնեկ լամինացիա				Մինչև ս.թ.մեկտե մբերի 30-ը
8	22111100/13	Ուսուցողական գրքեր -3	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 2-4» ուսուցչի ձեռնարկ (ուսուցողական գիրք), հեղ.՝ Ա.Քյուրքչյան և այլ և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Երկրորդ դասարանի դասագրքի մեթոդական նշակումը տրված է առանձին, իսկ 3-րդ և 4-րդ դաս. դասագրքերինը՝ միասնաբար: Կրտսեր դպրոցի մայրենի լեզվի դասագրքերի նպատակը կրթադաստիարակական տարբեր խնդիրներ լուծելն է, որն ուսուցչից				Մինչև ս.թ.մեկտե մբերի 30-ը

			պահանջում է բազմակողմանի գիտելիքներ, մասնագիտական մեծ վարպետություն, պատրաստակաժողովրդի և նվիրում: Ձեռնարկում առանձին բաժիններով նշված են առարկայի ծրագրային պահանջները և դրանց իրագործման ուղիները, դասագրքերի կառուցվածքը, լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը, ընթերցանության նյութերի մշակման մասին խորհուրդներ և դասականության արդիական մեթոդների կիրառման մասին տեղեկություններ: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 14.5 x 20 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ ֆուտբոլտ՝ 210 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմնարարություն՝ մետաղալար, լամինացիա									
9	22111100/14	Ուսուցողական գրքեր -4	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 5-6» ուսուցչի ձեռնարկ (ուսուցողական գիրք) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը հեղ.՝ Դ.Գյուրջինյան և այլ Բովանդակային չափանիշներ Ընդգրկում է թեմատիկ պլանավորման, հայտորոշիչ թեստերի և կիսամյակային գրավոր աշխատանքների համար նախատեսված բաժիններ: Ներկայացված են ուսուցանող գնահատման նպատակները: Սահմանված են ուսուցչի և աշակերտի դերն այդ գործընթացում: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 14.5 x 20 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 96 Կազմի թուղթը՝ ֆուտբոլտ՝ 210 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմնարարություն՝ լամինացիա ջերմաստիճան	հատ	150	1000	150000	Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը				
10	22111100/15	Ուսուցողական գրքեր-5	Գնման առարկա է հանդիսանում «Մշակատանք բնագրի շուրջ» ուսուցողական գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը հեղ.՝ Լ. Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Ձեռնարկը նախատեսված է ակադ դպրոցի աշակերտների և բուհերի	հատ	200	2500	500000	Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը				

			հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար: երաշխավորված է ՀՊՄՀ սկզբնական կրթության խորհրդի կողմից: Նպատակն է խոսքի զարգացման, լեզվաբանական հմտությունների խորացմանը: Գրքում ընդգրկված են հայ և օտար հեղինակների գործեր: Յուրաքանչյուր նյութի վերջում արված են անձանոթ բառերի բացատրություններ և առաջադրանքներ: Տեխնիկական չափանիշները Չափվել՝ 16,5 x 24 Տեքստի թուղթը՝ 70 գր. օֆսեթ Տեքստի գույները՝ 2+2 Էջերի քանակը՝ 176 Կազմի թուղթը՝ ֆուտբոլոտ 250 գ/քմ Կազմի գույները՝ 4 +0 Կազմարարություն՝ ֆոեզ լամինացիա				
11	22111100/3 3	Ուսուցողական գրքեր -6	Գնման առարկա է հանդիսանում «История Армении», հեղ.՝ Ա.Խաչիկյան գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Գիրքը հասցեագրված է սփյուռքի հայերին և տարբեր երկրների ընթերցողների, որոնց հետաքրքրում է Հայաստանի պատմությունն ու նշակումը: Գիրքն իրենից ներկայացնում է Հայոց պատմության համառոտ ակնարկ՝ սկսած հայ ժողովրդի կազմավորումից մինչև մեր օրերը: Գրքում նաև ընդգրկված են տարբեր ժամանակաշրջանների Հայաստանի պատմական 10 քարտեզներ: Տեխնիկական չափանիշները Չափվել՝ 14.5 x 20 Տեքստի թուղթը՝ 70գր. օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 312 Կազմի թուղթը՝ ֆուտբոլոտ՝ 250 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թեթևակաթ, լամինացիա ջերմաստիճան				Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը
12	22811130/2	Տեսրեր-1	Գնման առարկա է հանդիսանում «Գիրք-տետր 1», հեղ.՝ Ա.Գալստյան աշխատանքային տետր և դրա առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Գիրք-տետրը նախատեսված է «Մայրենի 1» դասագրքին գրուպինո գործածելու համար:				Մինչև ս.թ.սեպտեմբերի 30-ը

